Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11003/24-ԵԾ-3 պայմանագրի

**ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 5**

1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի տրամադրում և սոցիալապես անապահով անձանց սննդի կազմակերպում» |
| Դրամաշնորհի N | Լոտ 1. Երևան - ճաշարան |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 15.01.2024-31.12.2024թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 15.01.2024-31.12.2024թթ. |
| Ներկայացման օր | 08.01.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, ճաշարանում շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ, միրգ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 100 շահառու:
  Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է 4 դեպքի վարում, «Սոցիալական նպաստ» համակարգում վերափաստագրման կազմակերպում 4 և «Սոցիալական նպաստ» համակարգում եռամսյակային հրատապ օգնության դիմումի գործընթացի կազմակերպում 2 :
  Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 15 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:
- Այլ ծառայությունների տրամադրում.
  - Հոգեբանական աջակցության կարիք ունեցող 29 շահառուի հոգեբանը անհատական խորհրդատվություն է տրամադրել, իսկ 25 շահառու ներգրավվել են հոգեբանական խմբային հանդիպումներին,
  - Ըմման և զբաղվածության կարիք ունեցող 24 շահառու մասնակցել է կենտրոնում գործող խմբակներին:
  - Ճաշարանի 73 շահառու մասնակցել է կենտրոնում կազմակերպված թվով՝ 15 միջոցառումներին:
  - 15 շահառու (շարունակական) օգտվել է բաղնիքի ծառայությունից:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրված նյութերի հղումները տեղադրվել են եռամսյակային հաշվետվություններում.

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում աշխատակազմի կարողությունների ու գիտելիքների շարունակական զարգացումն ապահովելու համար.

- Շենգավիթի ցերեկային կենտրոնի սոցիալական աշխատողները մասնակցել են «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կենտրոնական գրասենյակի կողմից «Նունեի» սոցիալական տանը կազմակերպած դասընթացին՝ «Սոցիալական դեպքի վարման մեթոդաբանություն» թեմայով:

- Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա թիմերի պատասխանատու սոցիալական աշխատողը մասնակցել է տարեցների պաշտպանության ցանցի անդամ կառույցների ներկայացուցիչների՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի կողմից նախաձեռնած մեկօրյա վերապատրաստմանը, փորձի փոխանակմանը: Վերապատրաստումն անցկացրել է փորձագետ, որը տիրապետում էր մի շարք երկրներում տարեցների խնամքի և աջակցման կենտրոնների հիմնադրման և գործարկման աջակցման փորձին:
- Շենգավիթ. Աջափնյակ, Նուբարաշեն ցերեկային կենտրոնների սոցիալական աշխատողները. բուժքույրերը, մասնակցել են Եվրոխորհուրդի գրասենյակի կողմից կազմակերպած դասընթացին. «Սթրեսի կառավարում» թեմայով:

Ձևաչափ

# ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանի շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| Հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 105/98 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 77 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 25 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 13 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 6 |
| | 40-65 տարեկան | 19 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 57 |
| 1.4 | երեխաներ (միայն ճաշարանի պարագայում) | 2 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 100 |
| 3. | Այլ ծառայություն (նշել) Միջոցառումների կազմակերպում<br>Հոգեբանական ծառայություն<br>Բաղնիքի ծառայությունից | 73<br>29<br>15 |

Կազմակերպության ղեկավար Երվանդ Մխիթարյան «08»01.2025թ

[illegible]